ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/22

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ի տնօրեն՝

Հ. Վարդանյանի (պետական գրանցման վկայական թիվ՝ 03Ա1061646)

քննելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Քարաշամբի նոր թաղամասի ջրագծի անցկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ. ներկայացված և 18.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/22 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Վարդանյան-Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Վարդանյան-Շին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 18.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Քարաշամբի նոր թաղամասի ջրագծի անցկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը սահմանվել է 10.01.2019թ. ժամը 10:00-մ: Ընթացակարգի կայացման օրը 10.01.2019թ.:

Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի քարտուղարի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում է ուղարկվել ՀՀ ՊԵԿ:

ՀՀ ՊԵԿ-ից ստացվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերության հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող: Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 121 857 ՀՀ դրամ, որը գերազանցում է նվազագույն 50 000 ՀՀ դրամի շեմը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է փաստաթուղթ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված, որտեղ նշված է, որ 121 857 ՀՀ դրամ կազմող ժամկետանց հարկային պարտավորության բաղադրիչներն են եկամտային հարկը՝ 43 857 ՀՀ դրամ և դրոշմանիշային վճարը՝ 78 000 ՀՀ դրամ:

Ընկերությունն իր պարտավորությունների վերաբերյալ տեղեկանալուց անմիջապես հետո մարել է իր բոլոր հարկային պարտավորությունները, ավելին՝ ունի գերավճար 35 847 ՀՀ դրամ ԱԱՀ-ի գծով:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «... օրենքով կարգավորվում են մարտական գործողությունների հետևանքով զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են հատուցման հիմնադրամի ստեղծման և գործունեության կարգն ու պայմանները:»:

Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը վճարում են 1000 դրամ գումարի չափով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ 12 000 դրամ գումարի չափով:

Սույն իրավական հարթության վրա անհրաժեշտ է իրավական գնահատական տալ «պարտադիր» վճար եզրույթին ներկային գործող Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի լույսի ներքո:

Մասնավորապես ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

27.11.2005թ. ընդունված Սահմանադրության մեկնաբանությունների համաձայն՝ պարտադիր և անհատույց այն վճարներն է, որը հանրային իշխանության գործունեության

ֆինանսական ապահովման նպատակով պետական և «կամ» համայնքների բյուջեներ է մուծվում վճարողների կողմից ինքնահարկման ու կամավորության հիման վրա կամ գանձվում է պետական հարկադրանքի միջոցով, տուրքեր կամ պարտադիր այլ վճարը՝ «պետական և/ կամ համայնքների բյուջեներ մուծվող պարտադիր և անհատույց այն վճարն է, գանձույթը, որի վճարը հանդիսանում է պայմաններից մեկը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այն վճարողի օգտին իրավաբանական նշանակության գործողություններ կատարելու համար:»:

Այսպիսով՝ փաստ է, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարը չի կարող տիտարկվել «հարկ» եզրույթի տիրույթում, այն պետք է դիտարկել «տուրք կամ այլ պարտադիր վճար» տիրույթում:

Ինչպես գործող, այնպես էլ նախկին սահմանադրությունների տրամաբանական վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ «տուրք կամ այլ պարտադիր վճար» կատարելու արդյունքում վճարողի օգտին պետք է կատարվեն իրավաբանական նշանակության գործողություններ:

Նույն պարագայում, սակայն իրավաբանական նշանակություն ունեցող գործողություններ չեն կատարվում վճարում կատարողի օգտին, այս դեպքում դրոշմանիշային հարկադիր վճար կատարողն իր կամքից անկախ գնում է ինչ-որ դրոշմանիշ, որի գնման համար ինքը կատարում է հարկադիր գործողություն:

Հետևաբար, դրոշմանիշային վճարը չի կարող համարվել հարկային պարտավորություն, ուստի անհիմն է Ընկերությանը զրկել պայմանագիր կնքելու հնարավորությունից:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընկերության հայտը մերժելու մասին որոշումը:

«Վարդանյան-Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.02.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը էլեկտրոնային եղանակով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.02.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***09.01.2019թ.*** հայտ է ներկայացրել «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 16.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ն ***10.01.2019թ.*** դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 121 857 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***09.01.2019թ.*** հայտ է ներկայացրել «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***11 161 762 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.01.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 11.01.2019թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ի վերաբերյալ, որում սակայն Ընկերության կողմից հայտը ներկայացնելու ամսաթիվը նշվել է ***10.01.2019թ.:***

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 16.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ն ***10.01.2019թ.*** դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 121 857 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ համաձայն Armeps համակարգի համապատասխան էջի քաղվածքի՝ «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ն «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության ***հայտը ներկայացրել է 09.01.2019թ.:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ*** հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի,

քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Հետևաբար Ընկերության՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ ունենալու հարցն անհրաժեշտ է դիտարկել հայտը ներկայացնելու օրվա՝ 09.01.2019թ. դրությամբ:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 09.01.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը ***09.01.2019թ. դրությամբ ունի եկամտային հարկի գծով 43 825 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:***

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.02.2019թ. տրված թիվ 217 տեղեկանքը, որի համաձայն Ընկերությունը ***09.01.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է 43 825 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն եկամտային հարկի գծով:***

Այսպիսով՝ Ընկերության որպես հարկ վճարողի անձնական հաշվի քարտից քաղվածքի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.02.2019թ. տրված թիվ 217 տեղեկանքի համաձայն, Ընկերությունը ***09.01.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 43 825 ՀՀ դրամի չափով, որը չի գերազանցում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված թե Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսի (գնային առաջակը կազմել է 11 161 762 ՀՀ դրամ) և թե հիսուն հազար ՀՀ դրամի շեմը: Հետևաբար Ընկերության հայտը սույն մասով բավարարում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջը:

Այսպիսով, ուսումնասիրելով Ընկերության որպես հարկ վճարողի՝ անձնական հաշվի քարտից քաղվածքը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.02.2019թ. տրված թիվ 217 տեղեկանքը, գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է 10.01.2019թ. դրությամբ Ընկերության մոտ արձանագրված 121 857 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորությանը, ապա համաձայն «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ի՝ որպես հարկ վճարողի անձնական հաշվի քարտից քաղվածքի Ընկերությունը 10.01.2019թ. դրությամբ ունեցել է 43 857 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն՝ եկամտային հարկի գծով, իսկ ՀՀ ՊԵԿ-ի կողմից 22.01.2019թ. թիվ 54 տեղեկանքի համաձայն՝ 10.01.2019թ. դրությամբ Ընկերության մոտ առկա է 43 857 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն՝ եկամտային հարկի գծով և 78 000 ՀՀ դրամ՝ դրոշմանիշային վճարի գծով, որն արտացոլված չի եղել Ընկերության անձնական հաշվի քարտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վարդանյան-Շին» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Վարդանյան-Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**